Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
օգոստոսի 26 -ի N 487 - Ա
որոշման

«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ
ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքը	Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի վերանորոգում՝ շահառուներին ծառայությունների մատուցման միջավայրի բարելավման նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով:
3.	Բարեգործը	Շվեյցարական Կարմիր խաչ
4.	Ծրագրի կատարողը	Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ք. Գյումրի, Երևանյան խճուղի, 45/1 շենք, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	73,815,155 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի շահառուները:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թվականի օգոստոսի 31-ից մմինչև դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Գյումրու շուրջօրյան խնամքի կենտրոնի չափագրման, նախահաշվարկի կազմման, վերանորոգման ծառայությունների ձեռբերում, որի համար նախատեսված է 31.08.2020 թ. - 31.12.2020 թ. ժամանակահատված և 73,815,155 դրամ ֆինանսական միջոցներ:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնի չափագրման, նախահաշվարկի կազմման, վերանորոգման աշխատաքների պատվիրակում, որի համար նախատեսված են 73,815,155 դրամ ֆինանսական միջոցներ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Աշխատանքների ընթացքը ենթարկվելու է մշտական հսկողության ՀԿԽԸ կողմից: Նախագիծը ենթարկվելու է փորձաքննության, իրականացվելու է շինարարական աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն, ինչպես նաև հեղինակային հսկողություն: ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N66-Ն որոշմամբ հաստատված Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ